

**ՍԻԳԱՐԵՏ ԵՎ ՍԻԳԱՐ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՎՃԱՐՎՈՂ ՀԱՐԿԵՐՆ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՆՈՒՆԱ ՊԱՐՍՅԱՆ

ՀԱԱՀ Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման
ամբիոնի ասիստենտ, հայցորդ

Բանալի բառեր. հարկեր, հարկադրույք, տուրքեր, մաքսային վճարներ,
կազմակերպություն

Հայտնի է, որ այսօր լայնածավալ պայքար է տարվում ծխախոտի օգտագործման դեմ, որը իհարկե ունի իր ազդեցությունը շուկայի վրա: Շուկայական հարաբերությունների անցման արդի փուլում իրականացված բարեփոխումների և սոցիալ-տնտեսական այլ իրողությունների արդյունքում արմատական փոփոխությունների ենթարկված Հայաստանի տնտեսության ենթակառուցվածքն ու տնտեսաձևը հանգեցրել են տնտեսվարող սուբյեկտների որակական և քանակական կազմի փոփոխության: Միաժամանակ սկսվել են մի շարք ընկերությունների վերակազմավորման գործընթաց: Սակայն ՀՀ անցումային փուլին հատուկ մեծ բարեփոխումները նպաստավոր եղան սիգարետի և սիգարի արտադրությամբ զբաղվող ընկերությունների և վերջիններիս գործունեության հետևանքով ծխախոտի հումք արտադրող գյուղացիական տնտեսությունների համար:

Սիգարետի և հետագայում արդեն նաև սիգարի արտադրությունը ՀՀ տնտեսության ավանդական, հիմնականում տեղական հումքով ապահովված և բարձր տեմպերով զարգացող ենթաճյուղերից է: Արտադրության ծավալի աճի տեմպերն կապված չեն կազմակերպությունների չափերից: Արտադրության աճը հիմնականում պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ արտադրանքի նկատմամբ պահանջարկը, հումքային ապահովվածությունը, շուկայում գրաված դիրքը, արտադրանքի որակը:

Խորհրդային Հայաստանում ծխախոտ արտադրող միակ պետական հաստատությունը «Հայծխախոտ» ձեռնարկությունն էր: Ներկայումս ՀՀ-ում գործում են սիգարետ և սիգար արտադրող չորս խոշոր ձեռնարկություններ, որոնք աշխատում են ժամանակակից տեխնոլոգիաներով, կառավարման համակարգով և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով ու քաղաքականությամբ: ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող չորս խոշոր կազմակերպություններն են՝ «Գրանդ Տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս Տաբակ», «Մասիս Տաբակ» և «ՄՊՍ Սիգարոն» ընկերությունները: ¹ Ընդ

¹ www.armstat.am

որում վերոհիշյալ երեք կազմակերպությունները պատկանում են «Գրանդ Յուլիինգ»-ին: Եվ, ինչպես ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, վերևում արդեն թվարկած բոլոր կազմակերպություններն էլ վճարում են հարկեր և տուրքեր: Աշխարհի բոլոր երկրներում պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկերն ու տուրքերն են: Հարկերի և տուրքերի ընդհանրությունն այն է, որ դրանց միջոցով ձևավորվում են տվյալ երկրի կենտրոնական և տեղական բյուջեների եկամուտների հիմնական մասը: Այդ ընդհանրության հետ միասին գոյություն ունեն մասնավոր տարբերություններ: Հարկերը կատարվող պարտադիր վճարումներ են, որոնք գոյանում են ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտների հարկումից, ինչպես նաև ապրանքների վաճառքի գները հարկելուց: Տուրքը ֆիզիկական և իրավաբանական անձանցից գանձվող գումարն է՝ պետական որոշ ծառայություններից օգտվելու դիմաց²:

Ըստ ՀՀ հարկերի մասին օրենքի հոդված 3-րդի³. «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մայնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»: Ըստ ՀՀ պետական տուրքերի մասին 27 դեկտեմբերի 1997թ. օրենքի 2-րդ հոդվածի. «Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է»: Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները ՀՀ-ում վճարում են ուղղակի և անուղղակի հարկեր, ինչպես նաև մաքսային վճարներ և մաքսատուրքեր: Ողղակի հարկերից վճարում են եկամտային հարկ և շահութահարկ, իսկ անուղղակի հարկերից՝ ԱԱՀ և ակցիզային հարկ: Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները ՀՀ-ում վճարում են նաև այլ հարկեր, մաքսային տուրքեր և պարտադիր վճարներ⁴:

Յուրաքանչյուր երկիր չի կարող առանց հարկերի և տուրքերի գանձման կատարել պետության առջև դրված տնտեսական, սոցիալական, քաղաքա-

² Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ) ԵրՊՏԻ «Տնտեսագետ», Գ.Ե.Կիրակոսյան, Խ.Ե.Խլիլաթյան և ուրիշներ, Երևան-2000-488 էջ

³ www.parliament.am

⁴ www.taxservice.am

կան և հատկապես պաշտպանական գործառույթները: Միաժամանակ հարկերի և տուրքերի սոցիալ-տնտեսական էությունը այն է, որ վերջիններս տնտեսվարող սուբյեկտների եկամուտների որոշակի մասի յուրացումն է պետության և նրա տեղական մարմինների կողմից՝ համապետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով: Աղյուսակում 1-ում և աղյուսակ 2-ում ներկայացված են ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող չորս կազմակերպությունների կողմից վճարված հարկերն ու մաքսատուրքերը 2015 և 2016 թվականի տվյալներով⁵:

Աղյուսակ 1. 2015թ. ֆինանսական տարվա հունվար-դեկտեմբեր ամիսներում հարկ վճարողի կողմից վճարված հարկերի և տուրքերի ընդհանուր գումարը (հազար դրամ)

Հ/Հ	Կազմակերպությունները անունը	Գրանդ Տոբակո ՀԶ հայ կանադական	Ինտերնեշնլ Մասիս Տաբակ	Մասիս Տաբակ	ՄՊՍ Սիգարոն
	ՀՎՀՀ	02216066	04215053	04213058	00841344
1.	Ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտային հարկ)	2 330 043.3	2529200	150100	92228.3
2.	Անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային)	11 261 873.7	4590878.4	316003.3	437602.7
3.	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	107 805.2	118775.7	5830.3	41965.9
	Ընդամենը, որից	13 699 722.2	7238854.1	471933.6	571796.9
	Հարկային մարմինների կողմից հավաքագրված	10 141 188.6	6293783.2	449688.6	354894.0
	Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	3 558 533.6	945070.9	22245.0	216902.9
	Ընդամենը	13 699 722.2	7238854.1	471933.6	571796.9

2015թ. սիգարետ և սիգար արտադրող չորս կազմակերպությունները վճարել են 21 982 306 800 դրամի հարկ և տուրք, իսկ 2016թ.՝ 33 306 553 000 դրամ: 2016թ. վճարած հարկերը և տուրքերը 51.5 % գերազանցում են 2015թ. համապատասխան ցուցանիշներին:

⁵ www.customs.am

Աղյուսակ 2. 2016թ. ֆինանսական տարվա հունվար-դեկտեմբեր ամիսներում հարկ վճարողի կողմից վճարված հարկերի և տուրքերի ընդհանուր գումարը (հազար դրամ)

Զ/Զ	Կազմակերպությունները, անունը	ԲՁ Գրանդ Տոբակո հայկականական	Ինտերնեշնլ Մասիս Տաբակ	Մասիս Տաբակ	ՍՊՍ Սիգարոն
	ԶԿԶԶ	02216066	04215053	04213058	00841344
1.	Ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտային հարկ)	6433302.4	4330350	152000	74629.5
2.	Անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	15993028.0	4939389.7	326600	680935
3.	այլ հարկեր, տուրքեր պարտադիր վճարներ	144760.4	165544.4	7771.1	58242.5
	Ընդամենը, որից	22571090.8	9435284.1	486371.1	813807
	Զարկային մարմինների հավաքագրված	17634972.0	8238730.4	485836.6	494236.2
	Մաքսային մարմինների հավաքագրված	4936118.8	1196553.7	534.5	319570.8
	Ընդամենը	22571090.8	9435284.1	486371.1	813807

Աղյուսակ 3. ԶՅ արտաքին առևտուրն ԱՏԳ ԱԱ-ի ապրանքախմբերով (հազար ԱՄՆ դոլար)

ԱՏԳ ԱԱ-ի կոդը	Ապրանքի անվանումը	ԱՐՏԱԶԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ				
		Չ/մ	2015թ.		2016թ.	
			Քանակ	Մ. արժեք	Քանակ	Մ. արժեք
2402	Սիգար, սիգարիլլա, սիգարետ/ ներմուծում	մլն հատ	2.543	39.041	3.012	40.497
2402	Սիգար, սիգարիլլա, սիգարետ/ արտահանում	մլն հատ	15985.6	171082.0	20934.0	209224.4

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2015-2016թթ.. սիգարի, սիգարիլլայի, սիգարետի ներմուծման և արտահանման ծավալները արժեքային և քանակական արտահայտությամբ: Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության կարգավորման լծակները և պետական աջակցության համակարգը ԶՅ պետական կարգավորման կարևոր խնդիրներից են: Ձևավորվում է ձեռնարկատիրության պետական աջակցության համակարգ, որը կարող է նպաստել ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը կապված է հարկային, վարկային, ֆինանսավորման, ամորտիզացիոն, մաքսային համակարգերի արդյունավետ գործունեության հետ: Սակայն հատուկ ուզում են ընդգծել, որ պետության կողմից վարած՝ օրինակ ԶՅ-ում հարկային քաղաքականության որոշ տարրեր ոչ

միայն չեն նպաստում ձեռնարկատիրության զարգացմանը, այլև արհեստական խոչընդոտներ են ստեղծում ոլորտում գործող կազմակերպությունների համար: ՀՀ կառավարությունը մեկ անգամ չէ, որ հայտարարում է, թե սիգարետների հարկադրույքների բարձրացումը ծխելու դեմ պայքարի քաղաքականության տարրերից է: Սակայն թե՛ 2011-2014 տարիներին սիգարետի համար հաստատագրված վճարի բարձրացումը, թե՛ 2014-ից ուժի մեջ մտած օրենսդրական այս փոփոխությունների նախագիծը 24.03.2000թ.⁶ միայն ֆիսկալ նպատակ է հետապնդում: Պարզ ասած՝ բոլոր քայլերի հիմնական նպատակը հարկային մուտքերի ավելացումն է:

Կառավարությունում որոշվեց սիգարետների համար առավելագույն մանրածախ գին ամրագրել, ինչը ոչ միայն հարկերի հավաքագրման աճ է ապահովելու, այլև հանգեցնելու գների աճի: Գործադիրի ապրիլի 11-ի նիստի հաստատմանը ներկայացված որոշման նախագծում ֆինանսների նախարարության կողմից առաջարկվեց 2014թ. հունվարի 1-ից այդ գինը մակնշել նաև ծխախոտատուփի վրա: Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված է, որ ծխախոտի արտադրանքի ներմուծման և օտարման գործարքների հարկվող շրջանառությունը որոշվելու է՝ հիմք ընդունելով սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի: Ստացվում է, որ 2014թ. տեղի ունեցավ սիգարետների գների կտրուկ բարձրացում: Հարկման ընդհանուր դաշտ տեղափոխելը նշանակում է, որ հարկի չափը կախված է արժեքից՝ վճարվելու է ԱԱՀ, մաքսատուրք (10%), ինչպես նաև ակցիզային հարկ (ֆիլտրով ծխախոտի 1000 հատիկի հաշվով՝ 5 հազ. դրամ): Եթե մաքսատուրքի համար հիմք է հանդիսանալու արտադրանքի մաքսային արժեքը, ապա ԱԱՀ-ն հաշվարկվելու է՝ հիմք ընդունելով ոչ թե իրացման, այլ տուփի վրա նշված մանրածախ գինը: Ստացվում է, որ տնտեսավարողի համար ոչ նպատակահարմար է սիգարետը առավելագույն մանրածախ գնից ցածր գնով իրացնելը, քանի որ վճարվելիք ԱԱՀ-ն հաշվարկվելու է տուփի վրա նշված գնի հաշվով: Այսպիսով, ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերն ու տուրքերը ապահովում են պետական բյուջեի եկամտների բավականին տեսակարար կշիռ: Պատահական չէ, որ վերոհիշյալ կազմակերպությունները 2015-2016թթ. տվյալներով մտել են պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակած 1000 խոշոր հարկատուների ցանկի մեջ:

⁶ «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին ե ՀՀ օրենքը 2014թ

ԱՆՆԱ ՊԱՐՍՅԱՆ

Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերն ու տուրքերը ՀՀ-ում

Բանալի բառեր. հարկեր, հարկադրույք, տուրքեր, մաքսային վճարներ, կազմակերպություն

Ներկայացված է հարկերի և տուրքերի տնտեսագիտական բովանդակությունն ու կարևորությունը: Դիտարկված են սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները ՀՀ-ում, վերջիններիս կողմից վճարվող հարկերի տեսակները և տուրքերը, դրանց կարևորությունը պետական բյուջեի եկամուտների հավաքագրման գործում: Ցույց են տրված սիգարետ և սիգար արտադրող ՀՀ կազմակերպությունների հարկատեսակների և հարկադրույքների փոփոխությունները, դրանց ազդեցությունը սիգարետի և սիգարի գնի վրա:

Анна ПАРСЯН

Уплачиваемые налоги и сборы компаний производителей сигарет и сигар в РА

Ключевые слова: налоги, налогообложения, сборы, таможенные пошлины, организация

В докладе представлены экономическое содержание и важность налогов и сборов. Отмечены производители сигарет и сигар в Республике Армения, виды налогов и сборов уплачиваемые ими, их значимость в сборе доходов государственного бюджета. Показаны изменения видов и уровней налогов и сборов оплачиваемых производителями сигарет и сигар, их влияние на цены сигарет и сигар.

Anna PARSYAN

Taxes and fees paid by cigarette and cigar producing companies in RA

Key words: taxes, taxation, duties, customs fees, organization

The economic content and importance of taxes and duties are presented. Here are monitored cigarette and cigar producers in Armenia, the types of taxes and duties payable by the latter, their importance in the collection of state budget revenues. Changes in tax types and tax levels of Armenian organizations producing cigarettes and cigars have been demonstrated, as well as their impact on the price of cigarettes and cigars.